## ԱՐԱ ԶՈՀՐԱԲՅԱՆԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿՄԵԿՆԻ ՖՐԱՆՍԻԱ

18.11.2013 19:16



ՀՀ Փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանի գլխավորած պատվիրակությունը նոյեմբերի 20-23-ը աշխատանքային այցով կմեկնի Ֆրանսիա: Այցի նպատակն է Փարիզի փաստաբանական միության հետ գործընկերության ամրապնդումն ու խորացումն է, որը կարող է հնարավորություն ընձեռել համագործակցություն ստեղծել Ֆրանսիայի, ինչպես նաև եվրոպական այլ երկրների փաստաբանական միությունների և միջազգային կազմակերպությունների համար:

Այցի շրջանակներում քննարկվելու է ԿԱՐՊԱ-ի հետ հարաբերությունները, հատկապես՝ Պալատի կողմից վերջերս ԿԱՐՊԱ-ների միջազգային միությանն անդամակցելու տեսանկյունից, բացի այդ նաև անվճար իրավաբանական օգնության թեման, փաստաբանների վարքագիծը և կարգապահական վարույթները, պարտադիր վերապատրաստումը և այլն: Նախատեսվում է նաև ուսումնասիրել Միջազգային մասնագիտական կազմակերպությունների անդամակցելու հեռանկարը: Նոր կապեր կհաստատվեն հայ փաստաբանների հետ, որոնք կարող են նոր խթան հանդիսանալ համատեղ նախաձեռնությունների համար:

Նախատեսվում են հանդիպումներ ԿԱՐՊԱ-ի Ազգային միության նախագահ Ժան Շարլ Կրեբսի, Փարիզի փաստաբանական միության նախագահ Կրիստիան Ֆերալ Սչուհլի հետ, որի ընթացքում նախատեսված է նաև հուշագրի ստորագրում: Արա Զոհրաբյանի գլխավորած պատվիրակությունը հանդիպումներ կունենա նաև Երիտասարդ փաստաբանների միությունների ազգային ֆեդերացիայի և Ֆրանսիայի հայ փաստաբանների և իրավաբանների ֆրանսիական միության հետ:

Այցն իրականացվելու է ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի աջակցությամբ:

Հաջորդ նորությունը: ՄԵԿՆԱՐԿԵԼ Է ԱՐԱ ԶՈՀՐԱԲՅԱՆԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅՑԸ ՖՐԱՆՍԻԱ

### Առաջարկվող նորություններ



**20.09.2013**ՀՀ ՍԴ ՆԱԽԱԳԱՀ ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ ՇՆՈՐՀԱՎՈՐԵԼ Է ՀՀ ՓՊ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԱ ԶՈՀՐԱԲՅԱՆԻՆ

**25.10.2013**ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԳԻԼԴԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ



**23.10.2013**ԱՐԱ ԶՈՀՐԱԲՅԱՆԸ ՀԱՆԴԻՊԵՑ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ (ABA/ROLI) ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՀԵՏ

**18.10.2013**ՀՀ ՓՊ ՆԱԽԱԳԱՀԻ 17.10.2013Թ «ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳԾՈՎ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N11-Ա ՈՐՈՇՈՒՄԸ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })